

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի, 2020 N 1

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԵՎ
ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԻՍ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Սահմանել, որ Արցախի Հանրապետության պետական սահմանի անցակետով (այսուհետ՝ անցակետ) թույլատրվում է Արցախի Հանրապետության քաղաքացիների և նրանց ընտանիքների՝ Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամների, Արցախի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող, սակայն Արցախի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող անձանց մուտքը Արցախի Հանրապետության տարածք:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս անցակետում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ երեք օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) թեստի պատասխանը: Թեստի պատասխանն անցակետում չներկայացվելու դեպքում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցները ՊՇՌ հետազոտություն իրականացնելու համար նշված անձանցից իրականացնում են նմուշառում՝ վճարովի հիմունքներով:

Սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի համար, ովքեր Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ տասը օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի պատասխանը:

Պարտադիր ՊՇՌ թեստավորում անցնելու կանոնից բացառություն է արվում ԱՀ պաշտպանության բանակի կարիքներից ելնելով՝ զինված ուժերի անձնակազմի համար:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:

2.1. Թեստի պատասխանը բացասական լինելու դեպքում, իսկ թեստի պատասխան չներկայացվելու դեպքում՝ նմուշառում իրականացվելուց հետո, ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցների կողմից կատարվում է զննություն վարակի առկայության կամ վարակի ախտանիշների բացահայտման նպատակով, ինչպես նաև կատարվում է տրանսպորտային միջոց(ներ)ի ախտահանում: Ձևությամբ վարակի ախտանիշներ չհայտնաբերվելու և թեստի պատասխանը բացասական լինելու դեպքում, իսկ թեստի պատասխան չներկայացվելու դեպքում՝ նմուշառում իրականացվելուց հետո, բոլոր անձինք ենթակա են ինքնամեկուսացման (բացառությամբ բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և մեկ ուղեկցողի): Ինքնամեկուսացումը, որպես կանոն, սահմանվում է 14 օր ժամկետով՝ բացառությամբ մարդատար-տաքսի

ավտոմոբիլներով միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող անձանց, որոնց ինքնամեկուսացումը տևում է 1-2 օր՝ մինչև ՊՇՌ թեստի պատասխանի բացասական լինելու մասին ԱՀ առողջապահության նախարարության կողմից ծանուցվելը:

2.2. Թեստի պատասխանը դրական լինելու կամ հատուկ զննությամբ վարակի ախտանիշների հայտնաբերման դեպքում այդ անձանց նկատմամբ կիրառվում է հոսպիտալացում և (կամ) այլ սահմանափակող միջոցառումներ:

2.3. Անցակետով սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձանց՝ Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ՊՇՌ թեստի պատասխան չներկայացվելու և ՊՇՌ թեստավորման համար նմուշներ հանձնելուց հրաժարվելու, բժշկական զննություն անցնելուց, հոսպիտալացումից, ինքնամեկուսացումից և (կամ) այլ սահմանափակող միջոցառումներից հրաժարվելու դեպքում կարող է սահմանափակվել այդ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը որոշակի տարածքի (վայրի) սահմաններում՝ հետազոտման, բուժման և վարակի տարածումը կանխելու նպատակով:

3. Անցակետով թույլատրվում է Արցախի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այլ անձանց մուտքը Արցախի Հանրապետության տարածք:

4. Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս անցակետում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ երեք օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) թեստի պատասխանը:

Սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի համար, ովքեր Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ տասը օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի պատասխանը:

Պարտադիր ՊՇՌ թեստավորում անցնելու կանոնից բացառություն է արվում գյուղատնտեսական կամ այգեգործական աշխատանքներ իրականացնող անձանց, հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով՝ հանգուցյալի մերձավոր ազգականների (սույն որոշման իմաստով մերձավոր ազգական են համարվում հանգուցյալի ծնողները, ամուսինը, կինը, երեխաները, քույրը և եղբայրը), ԱՀ պաշտպանության բանակի կարիքներից ելնելով՝ զինված ուժերի անձնակազմի համար:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:

4.1. Թեստի պատասխանը բացասական լինելու դեպքում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցների կողմից կատարվում է զննություն վարակի առկայության կամ վարակի ախտանիշների բացահայտման նպատակով, ինչպես նաև կատարվում է տրանսպորտային միջոց(ներ)ի ախտահանում: Նշված անձինք ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցների կողմից ծանուցվում են Արցախի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակահատվածում այլ անձանց հետ շփումները հնարավորինս նվազեցնելու և սոցիալական հեռավորությունը պահելու անհրաժեշտության մասին:

4.2. Թեստի պատասխանը չներկայացնելու, թեստի պատասխանը դրական լինելու կամ հատուկ զննությամբ վարակի ախտանիշների հայտնաբերման դեպքում արգելվում է անձանց մուտքը Արցախի Հանրապետության տարածք:

5. Արցախի Հանրապետության տարածք մուտք գործած անձը (անձինք) ԱՀ ոստիկանության կողմից իրազեկվում են Արցախի Հանրապետությունում գործող արտակարգ իրավիճակի և համապատասխան սահմանափակումների վերաբերյալ, իսկ տվյալ անձանց՝ Արցախի Հանրապետությունում գտնվելու ընթացքում բնակության, հրավիրող կողմի և այլ կոնտակտային տվյալները գրանցվում են առողջապահական մարմինների կողմից՝ բժշկական դիտարկում իրականացնելու նպատակով:

6. ԱՀ ոստիկանության պետին՝ Արցախի Հանրապետություն մուտք գործած անձանց, նրանց մուտքի նպատակի, ինչպես նաև ինքնամեկուսացման մասին ծանուցված անձանց վերաբերյալ ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել Պարետին:

7. Արցախի Հանրապետության տարածքում կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված հիվանդին անմիջական խնամք տրամադրող կամ հիվանդի հետ շփում ունեցող անձանց (կոնտակտավոր) նկատմամբ կիրառվում են Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի հավելվածով նախատեսված սահմանափակումները՝ վերջիններիս ԱՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված մեկուսացման վայրեր տեղափոխելու կամ ինքնուրույն 14-օրյա ինքնամեկուսացման ձևով: Ինքնամեկուսացված անձանց նկատմամբ ԱՀ ոստիկանության և ԱՀ առողջապահության նախարարության կողմից կիրառվում են անհրաժեշտ միջոցառումներ:

8. Սույն որոշման 7-րդ կետում նշված անձինք գրավոր ծանուցվում են ինքնամեկուսացման պայմանները խախտելու համար նախատեսված պատասխանատվության մասին, իսկ վարակի ախտանիշներ չունեցող անձինք՝ նաև հետագայում վարակի ախտանիշներ ի հայտ գալու դեպքում բժշկական հաստատություններ դիմելու անհրաժեշտության մասին:

9. ԱՀ ոստիկանության պետին, ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ ֆինանսների նախարարին, ԱՀ պաշտպանության նախարարին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին, ԱՀ շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ ապահովել սահմանված միջոցառումների իրականացումը:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ